ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/324

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկ
Մասնակից՝ «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» գնանշման հարցում, սեղանների և աթոռների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.11.2021թ.-ի թիվ 26/26-1/19203-2021 գրությամբ «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի 05.11.2021թ.-ի թիվ 56 և 17.11.2021թ.-ի թիվ 58 գրությունների հիման վրա, 24.11.2021թ.-ին «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 24.11.2021թ.-ին:

24.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/324 համարի ծածկագիրը:

02.12.2021թ.-ին և 10.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.12.2021թ.-ին:

2. «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկը 05.11.2021թ.-ի թիվ 56 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հինադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կարիքների համար իրականացված «ԴՍԵԲ-ԳՀԱ.ՊՁԲ-2021/39» ծածկագրով գնման ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցրաց մասնակից ճանաչված «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից՝ պատճառաբանելով, որ թյուրիմացաբար ընթացկարգին մասնակցելու հայտի գնային առաջարկում ներկայացրել է միավորի արժեք ընդհանուր գնի փոխարեն /գրությունը կցվում է/:

Խնդրում ենք Ձեր միջնորդությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին ներառելու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.11.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.11.2021թ.-ի թիվ 26/26-1/19203-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/324 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սեղանների և աթոռների ձեռքբերման նպատակով 21.10.2021թ.-ին հայտարարվել է «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ),

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.10.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն:

v. 28.10.2021թ.-ին «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 28.10.2021թ.-ի «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով ընթացակարգին «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ, որի ժամանակ տեղի է ունեցել սխալմունք: «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով մրցույթին ներկայացրել է 1-ի չափաբաժնի 1 միավոր ապրանքի գնային առաջարկ (մրցույթին ներկայացրել է 1 չափաբաժնի 1 միավոր ապրանքի գնային առաջարկը 16 միավոր ապրանքի փոխարեն), որի պատճառով հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն գրավոր դիմել է Հանձնաժողովին, հայտնելով, որ սխալմամբ գրել է միավորի գին՝ ընդհանուր արժեքի փոխարեն և հրաժարվում է գործընթացը շարունակելուց, և որոշել է դիմել լիազոր մարմին «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար՝ որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարման հիմքով:

vii. «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 05.11.2021թ.-ի թիվ 56 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.11.2021թ.-ի թիվ 26/26-1/19203-2021 գրությամբ «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից սեղանների և աթոռների ձեռքբերման նպատակով 21.10.2021թ.-ին հայտարարված «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 28.10.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

28.10.2021թ.-ին «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 28.10.2021թ.-ի «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով ընթացակարգին «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ, որի ժամանակ տեղի է ունեցել սխալմունք: «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն «ԴՍԵԲ-ԳՀԱՊՁԲ-2021/39» ծածկագրով մրցույթին ներկայացրել է 1-ի չափաբաժնի 1 միավոր ապրանքի գնային առաջարկ (մրցույթին ներկայացրել է 1 չափաբաժնի 1 միավոր ապրանքի գնային առաջարկը 16 միավոր ապրանքի փոխարեն), որի պատճառով հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է դիմել լիազոր մարմին «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար՝ որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարման հիմքով:

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 05.11.2021թ.-ի թիվ 56 համարով՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 28.10.2021թ.-ին՝ որպես ընտրված մասնակից պայմանագրի կնքումից հրաժարվելու հիմքով, սակայն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 05.11.2021թ.-ի թիվ 56 համարով՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի

նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.11.2021թ.-ի թիվ 26/26-1/19203-2021 գրությամբ «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/324 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**